ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ

Դպրոց- Արինի միջնակարգ դպրոց

Ղեկավար- Կիմա Օհանիսյան

Ուսուցիչ- Շահանե Քոչարյան

ՎԱՅՔ 2023

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ1. Գրական ակնարկ 5
1.1 Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ՝ որպես սովորողի առաջադիմության ու զարգացման նախապայման: 5
1.2 Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության ու դաստիարակության համատեքստում: 6
Գլուխ 2. Ուսուցիչ - ծնող համագործակցության հետազոտության արդյունքները 10
2.1 Ուսուցիչ - ծնող փոխադարձ համագործակցությունը ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառմամբ: 10
2.2 Հետազոտության ընթացքը 12
Եզրակացություն 13
Հավելված 15
Օգտագործված գրականության ցանկ 16

Ներածություն

« Սովորական ուսուցիչը պատմում է:

Լավ ուսուցիչը բացատրում է :

Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս:

Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է» :

Ուիլյամ Ուորդ

Անհիշելի ժամանակներից երեխաների դաստիարակության գործում մեծ դեր ունեին ուսուցիչները: Շատ դեպքերում անտեսվում էին երեխայի ընտանեկան միջավայրի առանձնահատկությունները: Սակայն այժմյան իրականությունում երեխայի դաստիարակության հարցը լուծվում է փոխգործակցության մոդելի հիման վրա՝ առաջնային համարելով սովորողի անհատականությունը: Քանի որ երեխայի զարգացման ահռելի մասը ձևավորվում է ընտանեկան միջավայրում, ուստի նրա անհատականությունը կախված է ընտանեկան միջավայրից: Չնայած գենետիկորեն կամ ծնողների ազդեցությամբ ձևավորված բնավորության գծերին, դպրոցը մեծ դեր ունի անհատի դաստիարակության գործում: Ուսուցիչների՝ մասնավորապես դասվարի, աշակերտների ազդեցությամբ սերմանվում է աշակերտների անհատականությունը: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է իրականացնել համագործակցություն սովորողի ընտանիքի, ուսուցչի դպրոցական միջավայրի հետ: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը բարդ, երկարատև, նպատակային գործողությունների համակարգ է, որը իրենից ենթադրում է կրթական համակարգի վերլուծություն ու բարելավում:

Հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության արդիականությունը կայանում է նրանում, որ ժամանակակից աշխարհում սովորողի կրթական պահանջմունքների ապահովման համար կարևոր նշանակություն ունի ծնող-ուսուցիչ հաստատուն կապը, որի արդյունքում սովորողի կրթական մակարդակը կգրանցի որակի բարձրացման հնարավոր լավագույն արդյունք: Դասապրոցեսի ընթացքում ծագող բազմաթիվ խոչընդոտների պատճառով սովորողի բավարար անհրաժեշտ ուշադրության պակասի լրացման լավագույն լուծումը ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունն է:

Հետազոտության նպատակը:

- Ծնող-ուսուցիչ կապի պահպանում:
- Ծնողի ներգրավածությունը դպրոցին, դասապրոցեսին, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը, համադրոցական և արտադասարանական միջոցառումներին:
- Ծնողների տեղեկատվության պահպանումը կրթական գործընթացում:

Հետազոտության խնդիրը:

- Սովորողների կրթությանը վերաբերող հարցերի մասին ծնողների ներգրավածության կազմակերպումը
- Բազմազբաղ ծնողների ժամանակի սղության պատճառով ստեղծված իրադրությամբ պայմանավորված, երեխաներին հատկացվող ժամանակի ճիշտ կազմակերպումը:

Գլուխ1. Գրական ակնարկ

1.1 Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ՝ որպես սովորողի առաջադիմության ու զարգացման նախապայման:

Ծնողների հետ աշխատանքը դասղեկի աշխատանքի անբաժանելի մասն է: Այդ աշխատանքը հաջողություն է բերում, եթե այն լինելով սիստեմատիկ ու գիտականորեն հիմնավորված, օրգանապես մտնում է դասղեկի ընդհանուր մանկավարժական գործունեության մեջ: Ծնողների հետ աշխատանքի համակարգի տարրերն են. ընտանիքի, նրա կացության, դաստիարակչական գործունեության բնույթի ուսումնասիրությունը, երեխաների դաստիարակության մեջ դպրոցի, ընտանիքի միասնական պահանջների սահմանումն ու պահպանումը, ծնողների հետևողական, հոգեբանամանկավարժական լուսավորությունը, երեխայի զարգացման ընթացքի մասին սիստեմատիկ փոխադարձ ինֆորմացիա տալը, երեխաների հաջող ուսուցմանն, դաստիարակությանը նպաստող համատեղ որոշումների ընդունումը, անհրաժեշտության դեպքում ծնողներին պրակտիկ մանկավարժական օգնություն ցույց տալը, երեխաների դաստիարակությունը բարելավելու նպատակով հասարակության հետ կապեր սահմանելուն օժանդակությունը, դպոցում ու նրանից դուրս աշակերտների հետ արտադասարանային ուսումնադաստիարակչական աշխատանքին ծնողներին ներգրավվելը:

Ծնողների հետ աշխատանքը դասղեկից պահանջում է նրանց հետ վստահելի ու գործնական հարաբերությունների սահմանում, հետևողական ու անշեղ ուշադրություն:

Ծնողների հետ նրա աշխատանքի հիմնական սկզբունքներից մեկը ծնողների անձնական որակներում ու ընտանեկան դաստիարակության մեջ դրականի վրա հենվելն է:

Դաստիարակության ընդհանուր խնդիրները ավելի հաջող են լուծվում ծնողական կոլոկտիվի միջոցով :

Ուստի դասարանի ղեկավարը իր ջանքերն ուղղում է այդ կոլոկտիվի համախմբանն ու նրա պլանաչափ գործառնությանը:

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք

միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի առաջադիմության բարելավմանը: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում է սոցիալական շատ կարևոր հմտություններ և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք շատ կարևոր գործոններեն, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Ծնողները տեղեկացված են լինում իրենց երեխաների կրթական կարիքների մասին և խրախուսում են ներգրավվելը:[1] Առանց ծնողների օգնության և աջակցության հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել: Ծնողների հետ շփումն օգնում է ուսուցչին տեղյակ լինել, թե ինչ է կատարվել տանը երեխայի հետ, որ այս կամ այն կերպ ազդել է նրա հոգեբանության, վարքի ու տրամադրության վրա: Դա ուսուցչին թույլ է տալիս հասկանալ ու օգնել երեխային:

Ընտանիքը և դպրոցը դաստիարակության երկու հիմնական հավասարազոր սուբյեկտներն են, որոնք ազդում են երեխայի վրա մանկության և պատանեկության տարիներին: Ծնողները պետք է ակտիվ մասնակցեն մանկավարժական գործընթացին:

1.2 Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության ու դաստիարակության համատեքստում:

Ծնողների հետ հիմնական աշխատանքն անցկացվում է ծնողական ժողովների, զրույցների, խորհրդատվության, տնային այցելությունների միջոցով:

Հաջողված է այն դասարանը, որի ղեկավարը հաճախակի հրավիրում է ծնողական ժողովներ, ներկայացնում է սովորողների առաջընթացի մասին, քննարկում սովորողի հետ կապված ցանկացած հիմնախնդիր: Նա մեծ նշանակություն է տալիս ծնողական ժողովների նախապատրաստման ու անցկացմանը, որոնք օգտագործվում են ինչպես դաստիարակության ընդհանուր տակտիկայի մշակման, այնպես էլ ծնողների մանկավարժական լուսավորության համար :Դասարանական ժողովները կարող են լինել կազմակերպչական, թեմատիկ, ժողով-բանավեճեր: Ծնողական ժողովները մերձեցնում են ուսուցիչներին և ծնողներին, ընտանիքին մոտեցնում են դպրոցին, օգնում որոշել երեխայի

[1] George Primary Education Project, Հանձնարարականներ տնօրենների և ուսուցիչների համար, Թբիլիսի 2015, էջ 3:

կրթության վրա ազդելու ամենաօպտիմալ ուղիները: Հանդիպումների ժամանակ ծնողները համակարգված կերպով ծանոթանում են ընտանիքում և դպրոցում երեխաներին դաստիարակելու խնդիրներին, բովանդակությանը, ձևերին և մեթոդներին:

Ծնողները միշտ հիվանդագին են ընդունում իրենց երեխայի ցանկացած անհաջողություն: Մեծ նշանակություն ունեն ծնողների հետ դասղեկի անձնական շփումները: Դրանց արդյունավետությունը կախված է ամենից առաջ փոխադարձ ընկերակցության ցանկությունից, փոխադարձ վստահությունից, հարգանքից ու փոխադարձ պահանջկոտությունից: Նրանց հարաբերությունների ոճը, որպես կանոն, որոշում է դասղեկը: Ծնողներին դպրոց հրավիրելը և նրանց տուն այցելելը իրագործվում են նախնական պայմանավորվածությամբ: Դասղեկը ծնողներին ինֆորմացիա է տալիս, շեշտադրելով դրանց ուշադրությունը դրականի վրա, խոսում է դպրոցականի դժվարությունների ու անհաջողությունների մասին, ձգտելով պարզել ուսման մեջ թերանալու պատճառներն ու դրդապատճառները: Ուսուցիչը ծնողների ուշադրությանն է ներկայացնում դաստիարակության, նրանց յուրահատուկ խնդիրների ու մեթոդների մասին: Այսպես գաղափարաքաղաքական դաստիարակության մեջ ծնողները երեխաների գիտակցության վրա ներգործում են հասարակական կյանքի իրադարձությունների ու իրենց ապրելակերպի ճիշտ գնահատման միջոցով: Մտավոր դաստիարակության մեջ ծնողները չպետք է կրկնեն ուսուցչի աշխատանքը, այլ անհրաժեշտ պայմաններ ստեղծեն տնային առաջադրանքների կատարման համար, նրանց առաջնորդեն խելացի տրամաբանության, նախազգուշացնեն անհաջողությունները, խրախուսեն աշխատասիրությունն ու համառությունն ուսման մեջ, ձևավորեն արժեքային վերաբերմունք ստեղծագործական մտածողության նկատմամբ, համատեղ աշխատանքի միջոցով երեխաների մեջ դաստիարակեն աշխատանքի սովորույթ, խնայողականություն և հաշվենկատություն: Երեխայի բնավորությունը ձևավորվում է ամենից առաջ ներընտանեկան հարաբերությունների բնույթով: Իրենց առանձնահատկություններն ունեն նաև իրավական, գեղագիտական, ֆիզիկական դաստիարակությունները: Ժողովի ընթացքում կիրառել խաղեր, և ծնողների համագործակցության կազմակերպման խմբային ձևեր: Խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ հենվել առավել կենսափորձ ունեցող ծնողների կյանքի և մանկավարժական փորձի, ծնողական կոմիտեի անդամների և դպրոցի խորհրդի կարծիքների վրա: :/Կ. Դ. Ուշինսկի/

Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ

ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել դասղեկի և մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա: Եվ վերջապես ուսուցչի վարպետությունը կայանում է աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը, վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը, առանց վիրավորելու աշակերտի տեսակետը, աշակերտի ներշնչման կարողությունը: Ուսուցչի մոտեցումից շատ բան է կախված: Ուսուցիչն է, որ կարող է ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին, կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ: :/Կ. Դ. Ուշինսկի/

Ուսուցիչ-ծնող շփման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները.

- Խոսակցությունը չսկսել անմիջապես երեխայի հետ կապված հիմնախնդրից:
- Չշտապել անմիջապես լուծել այն:
- Հետաքրքրություն ցուցաբերել ծնողի և նրա աշխատանքի նկատմամբ:
- Քննարկել այն հուզական վիճակները, որոնք առաջ են գալիս դպրոցի, ուսուցիչների, երեխաների պատճառով:
- Ուշադիր լսել և ընդունել այն, ինչ ասում է ծնողը, փորձել հասկանալ, թե ինչու է նա այդպես մտածում:
- Ծնողներին հատկացնել այնքան ժամանակ, ինչքան անհրաժեշտ է տվյալ իրավիճակում:
- Ծնողներին տեղեկություններ հաղորդել անձամբ և ոչ թե երեխաների կամ երրորդ անձի միջոցով:[2]

Ծնող-դպրոց կապն ավելի անկաշկանդ ու հաճելի դրձնելու համար անհրաժեշտ է, որ ծնողն իրեն ազատ ու վստահ զգա: Իսկ ինչպե՞ս հասնել այդպիսի արդյունքի: Դրա համար ուսուցիչն է հանդես գալու առաջարկներով ու նախաձեռնություններով:

Բաց դաս, թե ծնողական ժողով, ցերեկույթ, թե արշավ՝ մեր ծնողներն ամենուր են…

[2] Նախաշավիղ, 4.2012, էջ 60,61:

Սա ամենօրյա աշխատանքի արդյունք է, որի հիմքում փոխադարձ վստահությունն ու հարգանքն է: Հայտնի է, որ բոլոր ծնողները չեն, որ տիրապետում են երեխայի դաստիարակության ու նախնական ուսուցման նրբություններին, ինչպես նաև մանկավարժական մեթոդներին: Այդ հարցը հիմնավորապես կարգավորվում է ծնող-ուսուցիչ կապի միջոցով: Միայն նրանց արդյունավետ համագործակցության դեպքում կարելի է սպասել դրական արդյունքների:

Գլուխ 2. Ուսուցիչ - ծնող համագործակցության հետազոտության արդյունքները

2.1 Ուսուցիչ - ծնող փոխադարձ համագործակցությունը ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Ժամանակակից զարգացման տեխնիկական միջոցները լայն ու բազմազան շփման հնարավորություններ են ընձեռում: Ծնորհիվ շուրջօրյա հասանելիության ապահովման, ծնողն ու ուսուցիչը օրվա յուրաքանչյուր վայրկյան հասանելի են միմյանց համար, որն էլ շատ կարևոր գործոն է և ունի մեծ նշանակություն ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության վրա: Բազմազան ու բազմաֆունկցիոնալ են առցանց հարթակները, որտեղ ազատ կերպով կարող են շփվել ուսցիչները, ծնողներն ու սովորողները:

Նմանատիպ հարթակներում կարելի է քննարկել ամեն ինչ: Նման շփումներն ու համագործակցություններն ունեն իրենց առավելությունները: օրինակ եթե սովորողը հետ է մնում կամ ինչ-որ խնդիր է առաջացել, չի կարելի սպասել այնքան մինչև ծնողն ինքը կմոտենա, կամ այդ մասին բարձրաձայնել միայն որոշ ժամանակ անց՝ ժողովի ժամանակ:

Ուսուցիչը պետք է նմանատիպ խնդիրների դեպքում կապ հաստատի ծնողի հետ անմիջապես. լինի դա հեռախոսով, սոցիալական ցանցի միջոցով, թե էլեկտրոնային

փոստով: Սովորողը հաջողության կհասնի միայն այն դեպքում, երբ ճիշտ ժամանակին, փոխադարձ համագործակցելով, իրեն կուղղորդեն և՛ ծնողը, և՛ ուսուցիչը միաժամանակ: Ժամանակակից զարգացած տեխնոլոգիական միջոցներով հաղորդակցումը խնայում է ուսուցչի և ծնողի համար և՛ ժամանակը, և՛ տարածությունը: Եթե ծնողը ժամանակի սղության պատճառով չի կարողանում հաճախել դպրոց, ապա նման ծնողի հետ խնայելով ժամանակը և տարածությունը, կարելի է ծնողական ժողով հրավիրելուց առաջ որևէ սոցիալական հարթակում քննարկել ծնողների հետ ժողովի թեման, նպատակները, դրա կարևորություն ու հրատապությունը: Նման հարթակներում ուսուցիչը կարող է տեղադրել որևէ բաց դասի տեսագրություն, որի մեջ յուրաքանչյուր ծնող կարող է տեսնել, թե ինչպես է իր երեխան իրեն դրսևորում դասի ժամանակ: Կարելի է նաև այդ նույն դասի տեսանյութը քննարկել նույն

հարթակում և կատարել եզրակացություններ: Կարելի է նաև ծնողների համաձայնությամբ դասի տեսագրությունը տեղադրել համացանցում:

Ինչքան բարձր մակարդակով և սերտ է ուսուցչի փոխադարձ համագործակցությունը ծնողի հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում, այնքան արդյունավետ է կրթության կազմակերպումն ու դաստիարակությունը:

2.2 Հետազոտության ընթացքը.

Տարիների աշխատանքային փորձը ցույց է տվել, որ տարրական դպրոցում ծնողներն ավելի են ներգրավված ուսումնական գործընթացին: Հաճախակի ինքնակամ այցելում են դպրոց և դպրոց-ծնող-ուսուցիչ կապն ավելի ամուր է դառնում:

Այպիսով, ելնելով մեր դպրոցի իրականացրած ծնող-դպրոց համագործակցությունից, վերանայելով արդյունքները , կատարեցինք դիտարկումներ, որոնք կներկայացնենք ստորև:

Ուսումը սկսելուց երեք շաբաթ հետո ծնողի տուն ուղարկեցի հարցաշար, որը պարունակում էր այսպիսի հարցեր. Ինչպիսի՞ն էր ձեր երեխան ավելի վաղ հասակում: Որո՞նք են ձեր երեխայի թույլ և ուժեղ կողմերը: Ի՞նչ է անում ձեր երեխան ազատ ժամանակ: Այս տեղեկատվությունը օգնեց ճանաչել ամեն մի աշակերտի, որպես անձնավորություն և որպես աշակերտ: Կարևոր է, թե ինչպես են ծնողները ստուգում, հսկում երեխաներին և նրանց ուսման գործընթացը: Չնայած այն բանին, որ ծնողները ևս զբաղված են, բայց և այնպես նրանք, մեծ հաճույքով ժամանակ տրամադրեցին իրենց երեխայի մասին տեխեկությունների հաղորդմանը: Հարցաշարի օգնությամբ ծնողը դպրոցին հաղորդեց իր ընտանեկան ավանդույթների և արժեքների մասին, նաև ընտանիքում եղած հիմնախնդիրների մասին տեղեկատվություն:

Համագործակցությունը հաջողված էր և դրական ազդեցություն ունեցավ սովորողների անհատականության և կրթական ուսումնառության վրա:

Եզրակացություն

- Ուսուցչի, սովորողի, ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է:
- Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա: Այստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները:
- Հարկավոր է հաճախակի ծնողական ժողովներ իրականացնել, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրներն ու սովորողների՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումներն ու գտնել միասնական լուծման տարբերակներ:
- Հարկավոր է մյուս սովորողների ծնողների մեջ ևս ստեղծել բարոյահոգեբանական կայուն ու առողջ միջավայր, որպեսզի հնարավոր լինի խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից:
- Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողին: Ուսուցիչն իր նեղ մասնագիտական գիտելիքներով ու փորձառությամբ ցանակալի է, որ կիսվի ծնողների հետ:
- Կարևոր պայման է փոխադարձ հարգանքն ու այն գիտակցումը, որ կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորմանը:
- Մենք պետք է փորձենք ծնողներին վստահություն տալ, որ որակյալ ուսուցիչները կսովորեցնեն և կկրթեն իրենց որդուն կամ դստերը, և որ դրա համար պատրաստ են բոլոր անհրաժեշտ պայմանները:

«Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև»: Ուրեմն կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ, կարողանանք ճիշտ դաստիարակության միջոցով դաստիարակել ու կերտել երկրի, ինչու չէ, նաև աշխարհի ապագա պատմությունը: (Ա. Ս. Մակարենկո)

Ուսուցիչները և ծնողներն ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում. Նրանք են կրում նրանց զարգացման հիմնական պատասխանատվությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ: Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց-ընտանիք համագործակցությունը:



Հավելված

Տնօրենի և ուսուցիչների աջակցությամբ դպրոցում ստեղծվում է ծնողական խորհուրդ: Խորհրդի կազմում բացի ծնողներից լինում են նաև ուսուցիչներ:

Ծնողական խորհրդում ընդգրկվում են բանիմաց, հասարակական աշխատանքներին հմուտ, օրինապահ ծնողներ: Նրանք չեն վարձատրվում:

Մասնակցում են խորհրդի ժողովներին և ծնողներից մեկին՝ արժանավորին, ընտրում են նախագահ: Նա տեղեկատվություն պետք է ունենա դպրոցի բոլոր աշխատանքների, այդ թվում նյութական ռեսուրսների մասին:

Ծնողական կոմիտեն վերահսկում է բոլոր աշխատանքները: Անհրաժեշտության դեպքում առաջարկում է կոնկրետ լուծումներ:

Օգտագործված գրականության ցանկ

- Յու.Ա. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան <<Մանկավարժություն>> 2005թ.,
- Կ.Դ . ՈՒշինսկի,
- Մ.Մելքումյան <<Մակարենկոն ընտանեկան դաստիարակության մասին>> Երևան, 1985թ.,
- Նախաշավիղ 4.2012